Հարկային տեղեկատվական համակարգ
www.taxinfo.am
taxinfo.am iTax

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N 1205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 ապրիլի 2013 թ.
N 351-Ն

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածին, ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Անհուսալի համարվող հարկային պարտավորությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանելու մասին» N 1205-Ն որոշմամբ սահմանված կարգում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 2-րդ կետի «բ» ենթակետում և 11-րդ կետում «500.0 հազ.» բառերը փոխարինել «մեկ միլիոն» բառերով.

2) 2-րդ կետի «գ» ենթակետը «անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման» բառերից հետո լրացնել «կամ պետական հաշվառումից հանման» բառերով.

3) 2-րդ և 3-րդ բաժինների վերնագրերը «գործունեության դադարման գրանցման» բառերից հետո լրացնել «կամ պետական հաշվառումից հանման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի պաշտոնակատար — Տ . Սարգսյան

15 ապրիլի 2013 թ.
Երևան